

**ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ Նունե Մովսիսյանի ելույթը
Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի (ՀՕՖ) Հայաստանի մասնաճյուղի հետ
համատեղ առողջապահական ծրագրի I փուլի ամփոփման ժամանակ**

2016 թ. ՀՕՖ Հայաստանյան գրասենյակի զարգացման գծով փոխտնօրեն,
առողջապահական ծրագրերի ղեկավար Համբարձում Սիմոնյանի հետ
ձեռնամուխ եղանք ՀՀ Արագածոտնի մարզում իրականացնել այս ծրագիրը,
որը ընգրկում է 0-18 տարեկան բալիկներին:

Մարզի առողջապահության վարչությունը ներկայացրել է առողջական
խնդիրներ ունեցող 350 երեխայի ցուցակ: Երեխաների խնդիրները շատ
տարբեր են: Քննարկման արդյունքում կատարվեց խմբավորում ըստ
առաջնահերթության: Այսօր I փուլը ամփոփելով ցանկանում եմ
շնորհակալություն հայտնել ամերիկահայ բարերար Արփի Հովնանյանին, ում
բարեգործության շնորհիվ Արագածոտնի մարզի տարբեր համայնքներից
ընդգրկված առողջական խնդիրներ ունեցող 19 երեխա ստացել է բժշկական
խորհրդատվություն և անհրաժեշտ միջամտություն մայրաքաղաքի
առաջնակարգ կլինիկաներում:

Քանի որ ներկայացված երեխաների թիվը անհամեմատ մեծ է, ներկա
պահին դիտարկվում է ծրագրի II փուլի հնարավորությունը, որի շնորհիվ ևս
մի քանի երեխաներ հանարավորություն կստանան օգտվելու իրենց այդքան
անհրաժեշտ բժշկական աջակցությունից:

Հարգելի պարոն Համբարձում Սիմոնյան մեր աշխատանքը
գնահատեցիք արդյունավետ: Ուզում եմ շնորհակալություն հայտնել Ձեզ մեր
համատեղ արդյունավետ աշխատանքի համար:

Յուրաքանչյուր երեխայի առողջության խնդիրը լուծելիս լույս եք վառում այդ
ընտանիքում, համայնքում, մարզում: